Հայաստանի պետական կամերային նվագախմբին երաժշտական գործիքների տրամադրման ծրագրի ստորագրման արարողությունը

2020թ.-ի փետրվարի 26-ին Երևանում, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում տեղի ունեցավ Հայաստանի պետական կամերային նվագախմբին երաժշտական գործիքների տրամադրման 90,889 ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագրի ստորագրման արարողությունը:

Դրամաշնորհի պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ջուն Յամադայի և Կամերային երաժշտության ազգային կենտրոնի տնօրեն պարոն Նորայր Նազարյանի կողմից՝ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար պարոն Արայիկ Խզմալյանի և այլոց ներկայությամբ:

Ծրագրի նպատակն է տրամադրել տարատեսակ անհրաժեշտ երաժշտական գործիքներ և սարքավորումներ (բոլորը ճապոնական Yamaha ապրանքներ), ներառյալ մեծ դաշնամուրը, Կլավինովան, մի քանի հարվածային գործիքներ և ֆոնային ձայնային համակարգը՝ Կամերային երաժշտության ազգային կենտրոնի երաժշտական գործունեությանը աջակցելու և խթանելու համար, այսպիսով հայկական հասարակությանը ապահովելով հրաշալի երաժշտությամբ և երաժշտական գործունեության հետագա զարգացմամբ:

Դրանից կշահեն Հայաստանի պետական կամերային նվագախմբի 32 անդամները, ինչպես նաև հայ և արտասահմանյան դաշնակահարներ և կամերային սիմֆոնիկ նվագախմբեր՝ ելույթ ունենալով երկրում, ինչպես նաև ներկայացնելով Ճապոնիայի երաժշտական գործիքների գերազանց արտադրական տեխնոլոգիաները և Հայաստանի դասական երաժշտության հասուն մշակույթը:



Դեսպան Յամադան և Կամերային երաժշտության ազգային կենտրոնի տնօրեն պարոն Նազարյանը ստորագրում են դրամաշնորհի պայմանագիրը



Դեսպան Յամադայի և պարոն Նազարյանի ձեռքսեղմումը պայմանագիրը ստորագրելուց հետո

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար պարոն Արայիկ Խզմալյանի և դեսպան Յամադայի ձեռքսեղմումը

Պարոն Խզմալյանի ելույթը

Դեսպան Յամադայի ելույթը

Պարոն Նազարյանի ելույթը